ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Մեծ եղեռնի հուշարձանի կառուցումը.— Հայաստանի Հանրապետության Մինիստրների սովետի որոշմամբ, շինարարության գործերի պետական կոմիտեն, Երևանի քաղաքային սովետը և Հայաստանի ճարտարապետների միությունը հայտարարել էին 1915 թվականի մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի մրցանակաբաշխություն: Վերջերս հանրագումարի բերվեցին մրցանակաբաշխության արդյունքները: Մրցանակաբաշխության հանձնաժողովը հավանություն տվեց երիտասարդ ճարտարապետներ Ս. Թարխանյանի, Ս. Քալաշյանի և քանդակագործ Հ. Խաչատրյանի նախագծին:

Նախագիծը բաղկացած է երեք հիմնական տարրերից: Կենտրոնում գտնվում է կլորաձև բաց դամբարանը հավերժական կրակով, որի շուրջը կիսաթեք պատեր են հակված կրակին: Այնուհետև գրանիտե երկայնաձիգ մի պատ՝ զարդարված հարթաքանդակներով: Դամբարանի կողքին վեր է խոյանալու հայ ժողովրդի վերածնունդը խորհրդանշող բարձրաբերձ մի սյուն:

Հուշարձանը կանգնեցվելու է Ծիծեռնակաբերդի կբռսայգու բարձունքին: Շուտով կսկսվի հուշարձանի կառուցումը:

Նոր ֆակուլտետներ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում.— Նոր ուսումնական տարվա նախօրյակին, Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում (ցերեկային, երեկոյան և հեռակա բաժանմունքները միասին վերցրած) ընդունվել են շուրջ 8 000 ուսանողներ:

Որոշ ուսումնական հաստատություններում բացվել են նոր ֆակուլտետներ կամ բաժիններ: Այսպես, օրինակ, պետական համալսարանում ստեղծված է կիբեռնետիկայի բաժին: Պոլիտեխնիկական ինստիտուտում ստեղծված են բաժիններ, պատրաստելու համար մասնագետներ ավտոմոբիլային, տեքստիլ և կիսահաղորդիչների արդյունաբերության համար: Մի քանի տասնյակ տեղեր են տրված Հայաստանի, Մոսկվայի, Լենինգրադի ու Կիևի բարձրագույն ուսումնական հաստատություններում, ուր ձեռք կբերվեն տեխնիկական այնպիսի պրոֆեսիաներ, որոնց ուղղությամբ մեզ մոտ մասնագետներ չեն պատրաստվում:

Արժեքավոր աշխատություն.— Հայաստանի գիտությունների ակադեմիան հրատարակել է Մաշտոցի անվան մատենադարանի ավագ գիտական աշխատող Գևորգ Աբգարյանի «Սեբեոսի «Պատմությունը» և Անանունի խնդիրը» խիստ արժեքավոր և հետաքրքրական աշխատությունը:

Գ. Աբգարյանը գտնում է, որ վերջին 135 տարվա ընթացքում մեր պատմագրության մեջ Սեբեոսին վերագրվող «Հերակլի պատմությունը» սխալմամբ է Սեբեոսին վերագրվել: Մանրակրկիտ ուսումնասիրություններից հետո, հիմք ընդունելով ԺԷ դարի ականավոր գործիչ Վարդան Բաղիշեցու հարուստ գրադարանի գրքերի ցանկը, Գ. Աբգարյանը եզրակացնում է, որ Սեբեոսին վերագրվող «Պատմության» գրքի հեղինակը եղել է Խոսրով պատմիչը: Սեբեոսի «Հերակլի պատմությունը» մեզ չի հասել:

Գիրքը, որը վերագրվել է Սեբեոսին, եղել է պատմագրական մի ժողովածու, որը ժամանակին գրվել է Վարդան Բաղիշեցու պատվերով և որի մեջ մտցված են եղել առանձին հատվածներ մեր պատմագիրների աշխատություններից, այդ թվում նաև բյուզանդական Հերակլ թագավորի պատմությունը: Ժողովածուի առաջին չորս գլուխները, որոնք իրենց բովանդակությամբ չեն համապատասխանել գրքի բովանդակության, պատմիչները վերագրել են Անանունին, իսկ Հերակլին վերաբերող գլուխը՝ Սեբեոսին:

Գ. Աբգարյանը գտնում է, որ Հերակլին վերաբերող գլուխը պատկանում է Խոսրովին, իսկ առաջին չորս գլուխները ոչ թե Անանունին, այլ ԺԱ դարի պատմիչ Հովնան Տարոնացուն և կազմում են վերջինիս «Բագրատունյաց պատմություն» կրոած գրքի առանձին հատվածները:

Գ. Աբգարյանը ներկայիս վերականգնում է և տպագրության պատրաստում Խոսրովի «Պատմության» սկզբնական բնագիրը, որն աղավաղվել է դարերի ընթացքում և ավանդաբար կոչվել է Սեբեոսի «Պատմություն»:

Մատթեոս Զարիֆյանի երկերի ժողովածուն.— Արևմտահայ մի շարք ականավոր գրողների երկերի հրատա-

ռակումից հետո, «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել տաղանդավոր և եղերաբախտ բանաստեղծ Մատթեոս Զարիֆյանի երկերի ժողովածուն: Մ. Զարիֆյանի ստեղծագործությունները առաջին անգամ են ներկայացվում սովետահայ ընթերցողներին:

Ժողովածուում զետեղված են հեղինակի 1921 և 1922 թվականներին առանձին գրքերով լույս տեսած բանաստեղծությունները, ինչպես նաև այլ քերթվածներ և արձակ էջեր:

Զարուհի Գալեմքյարյանի ստեղծագործությունների ժողովածուն.— «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել ամերիկահայ ճանաչված գրող-բանաստեղծուհի Զարուհի Գալեմքյարյանի ստեղծագործությունների ժողովածուն «Հասկաքաղ» խորագրով:

Ավելի քան 90 տարվա իր կյանքի շուրջ 70 տարին Զ. Գալեմքյարյանը նվիրել է հայրենի գրականության ու մշակույթին՝ դառնալով նրա համեստ ու տքնաջան գործիչներից մեկը: Անցյալ տարի Երևանում նշվեց վաստակավոր գրողի ծննդյան 90-ամյակը: Ներկա ժողովածուն լույս է ընծայվել այդ տարեթվի առթիվ: Ժողովածուում զետեղված են հեղինակի չափածո և արձակ գործերի լավագույն նմուշները, Սովետական Հայաստանի վերապարթոնքն ու վերելքը դրվատող ջերմ էջեր, ինչպես նաև հետաքրքրական նյութեր Արշակ Չոպանյանի, Ավետիք Իսահակյանի, Փանոս Թերլեմեզյանի և Եղիա Տեմիրճիպաշյանի մասին:

Նկարիչ Է. Իսաբեկյանի գործերի ցուցահանդեսը.— Ավելի քան մեկ ամիս տևեց սովետահայ նշանավոր նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի գործերի ցուցահանդեսը, որը բացվել էր Երևանում: Ցուցադրված էին նկարչի շուրջ 300 գեղանկարչական և գրաֆիկական գործերը: Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջ բերեց և ունեցավ հավարավոր այցելուներ:

Է. Իսաբեկյանի նախասիրած թեմաներից է հայ ժողովրդի անցյալը: Այդ շարքից հետաքրքրական են նրա «Պատասխան Հավկերտին», «Ավարայրի ճակատամարտը», «Դավիթ Բեկ» և այլ արժեքավոր կտավները: Հայտնի է նրա «Պատանի Դավիթը» մեծ նկարը: Լինելով Զանգեզուրի հարավատ ծնունդ, Է. Իսաբեկյանը տվել է մի շարք գործեր՝ նվիրված հայտնի լեռնաշխարհին: Նա վարպետորեն նկարավարդել է Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Ս. Խանզադյանի «Մխիթար սպարապետ» վեպերը: Այդ նկարավարդումների լավագույն նմուշները ներկայացված էին ցուցահանդեսում:

Գիտությունների ակադեմիայի նստաշրջանը Ղափանում.—Վերջերս Հայաստանի գիտությունների ակադեմիան իր հերթական նստաշրջանը գումարեց Ղափանում, որը հայտնի է որպես Հայաստանի լեռնաշխարհային արդյունաբերության կենտրոն: Մի քանի օր շարունակ Ղափանի հանքագործների կուլտուրայի պալատում, ակադեմիայի հաջորդական նիստերում լսվեցին զեկուցումներ Զանգեզուրի հանքային հարստությունների հետագա ուսումնասիրության, ջրային միջոցների օգտագործման, ինչպես նաև լեռնային Հայաստանի տնտեսական զարգացման հեռանկարների մասին:

Նիստերին նախագահում էր ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Նա նշեց, որ ներկա նստաշրջանը ամենից խոշորն է, որն անցկացնում է ակադեմիան Երևանից դուրս: Այնուհետև անվանի գիտնականը մասնավոր զեկուցում կարդաց Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման գործում գիտությանը վերապահված դերի մասին: Բոլոր զեկուցումները կարդացվեցին ակադեմիայի գիտական աշխատողների կողմից: Նիստերը շատ բավմամարդ էին: Գիտնականների զեկուցումները լսելու էին գալիս Ղափանի և շրջանի ինժեներները, ուսուցիչները, ղեկավար աշխատողները և մտավորականության ներկայացուցիչներ:

Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու արձանները.— Մի նոր և առավել գեղեցիկ տեսք է ընդունել Երևանի Մաշտոցի անվան մատենադարանի գլխավոր մուտքը: Մուտքի երկու կողմերում վերջերս դրվեցին հայ պատմագրության նախահայր Մովսես Խորենացու և միջնադարյան ականավոր գիտնական Անանիա Շիրակացու քանդակ-արձանները: Երկու արձաններն էլ քանդակված են բազալտից, ունեն շուրջ 3-ական մետր բարձրություն: Մովսես Խորենացին քանդակել է արձանագործ Երեմ Վարդանյանը, իսկ Անանիա Շիրակացին՝ Գրիգոր Բաղալյանը: Երկու քանդակագործներն էլ երիտասարդ են, մի քանի տարի առաջ ավարտել են Երևանի գեղարվեստի ինստիտուտը:

Շուտով քանդակագործ Ղուկաս Զուբարյանը կավարտի Մեսրոպ Մաշտոցի արձանի քանդակումը, նույնպես բազալտից: Այն տեղադրված է մատենադարանի շքամուտքի ներքևի մասի կենտրոնում: Առաջիկայում մատենադարանի մուտքի մոտ դրվելու են Սահակ Պարթևի, Եղիշեի և Կորյունի արձանները:

Ավետիք Իսահակյանի արձանը.— Երևանը զարդարվեց ևս մի նոր արձանով: Դա մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի արձանն է, որը դրվեց քաղաքի կենտրոնական պուրակներից մեկում, Աբովյան և Իսահակյան փողոցների անկյունում: Այս գեղեցիկ արձանի հեղինակն է երիտասարդ քանդակագործ Ս. Բաղդասարյանը:

Արձանը պատրաստված է բրոնզից: Վարպետն ամբողջ հասակով, ձեռքին վերարկուն ու ձեռնափայտը, կանգնած է համեմատաբար ցածր, գրանիտյա պատվանդանին և թվում է, թե քայլում է պուրակով, շուրջի մարդկանց հետ միասին: Արձանի բարձրությունն է, պատվանդանով միասին, ավելի քան 4 մետր: Արձանի բացումը տեղի ունեցավ մեծ հանդիսավորությամբ:

Դերասան Արմեն Արմենյանի մահը.— Լենինականում 94 տարեկան հասակում վախճանվեց հայ բեմի խոշորագույն վարպետներից մեկը, տաղանդավոր դերասան Արմեն Արմենյանը (Իփեքյան): Շուրջ 60 տարի Արմենյանը իրեն նվիրել է հայ բեմական արվեստին և՛ իբրև դերասան, և՛ իբրև բեմադրող ու մանկավարժ: Իր ստեղծագործական կյանքի վերջին 20 տարին նա աշխատել է Լենինականի թատրոնում: Ամենայն իրավամբ կարելի է ասել, որ Ա. Արմենյանը հանդիսացել է սովետահայ թատրոնի հիմնադիրներից մեկը:

Ա. Արմենյանը իր բեմական գործունեությունն սկսել է 1902 թվականին Կոստանդնուպոլսում: Արվեստագի-

տական կրթությունը ստացել է Փարիզում: Պոլսից հետո նա անցել է Կովկաս և գործել գրեթե բոլոր հայաշատ վայրերում իբրև դերասան և ռեժիսոր: Ա. Արմենյանը ներկայացումներով հանդես է եկել Թուրքիայի, Եգիպտոսի, Ռումինիայի, Բուլղարիայի, Ուկրաինայի քաղաքներում և Մոսկվայում: Սովետական կարգերի հաստատումից հետո, նա բնակություն է հաստատել Լենինականում, ուր և մնաց մինչև իր կյանքի վերջը:

Ա. Արմենյանը բոլորի կողմից ճանաչված և գնահատված թատերական գործիչ էր, իսկական ժողովրդական դերասան: Վաստակավոր մշակի թաղումը տեղի ունեցավ Լենինականի պանթեոնում:

Սպորտային նոր դահլիճ.— Երևանում, քաղաքային կենտրոնական մարզադաշտին կից, ավարտվեց սպորտային մեծ դահլիճի կառուցումը: Դահլիճն ունի 3 800 տեղ; բացի այդ, անհրաժեշտության դեպքում կարող է տեղավորել ևս 1 000 մարդ: Ստեղծված են բոլոր հարմարությունները սպորտային մարզանքներ, խաղեր, մրցումներ, ինչպես նաև համերգներ կազմակերպելու համար: Կան հատուկ օթյակներ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և կինոյի աշխատողների համար: Այս դահլիճում կարելի է կազմակերպել սպորտի ամենատարբեր ձևերի խոշոր մրցումներ:

Այսպիսի խոշոր դահլիճի անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում Երևանում: Նախատեսված է դահլիճին կից կառուցել սպորտային այլ բացօդյա մարզասրահներ ու դաշտեր:

Նոր գործարան Սևանում.— Սևան ավանում շարունակվում է կառուցումը մի նոր և շատ հետաքրքրական գործարանի: Այդ գործարանը բազալտ քարից պետք է ստանա մի տեսակ թել, որից պատրաստված գործվածքը կունենա ջերմամեկուսիչ և էլեկտրամեկուսիչ հատկություններ: Այդպիսի գործվածքը կարող է դիմանալ 700 աստիճան ջերմության: Բացի թելից, գործարանը բազալտից կարտադրի նաև այլ նյութեր, որոնք նույնպես կունենան վերոհիշյալ հատկությունները: Գործարանը իր տեսակի մեջ առաջինն է լինելու Սովետական Միության մեջ: Նա կարող է օրական տալ մինչև 2 տոննա ջերմամեկուսիչ և էլեկտրամեկուսիչ նյութեր, որոնք լայն կիրառում կգտնեն երկրի ջերմաէլեկտրակայաններում և արդյունաբերական գործարաններում:

Սևանի երկաթուղին.— Մինչև վերջերս Երևան—Սևան էլեկտրական երկաթուղով գնացքները հասնում էին մինչև Սևան ավանը: Վերջերս այդ գիծը երկարացվեց ևս 5 կիլոմետրով և այժմ գնացքները հասնում են մինչև լճափ, նախկին կղզու դիմաց: Հուլիս—սեպտեմբեր ամիսներին, տասնյակ հազարավոր երևանցիներ իրենց հանգստյան օրերն անցկացրին գեղատեսիլ լճի ափին:

Անդրկովկասի երկաթուղային վարչությունը շարունակում է Սևանի երկաթուղագծի շինարարությունը: Գծի նոր հատվածը կունենա 55 կիլոմետր երկարություն և Սևան ավանը կկապի Շորժայի հետ՝ Ծովագյուղի (Զիբուխլու) վրայով: Շորժան գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին: